ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԵՐԳ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՆԿԴ - 4-09-13	Բովանդակություն և առաջարկվող փոփոխություններ
ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ներդաշնակ հոգևոր զարգացում, երաժշտական ունակությունների, երաժշտական լսողության, երաժշտական մտածողության զարգացում, ազգային երաժշտական մշակույթի յուրացում, երաժշտության ունկնդրման, երաժշտական ստեղծագործությունների ընկալման, վերլուծության և գնահատման ունակությունների ձևավորում:	Մոդուլի նպատակն է ուսանողներին ներկայացնել բարձրաճաշակ երաժշտություն, որը կնպաստի նրանց գեղագիտական ճաշակի ձևավորմանը, ձևավորել երաժշտություն ունկնդրելու կուլտուրա, երաժշտության միջոցով հաղորդակից դարձնել ազգային մշակույթին, նպաստել դրա յուրացմանը, երաժշտական մտածողության ձևավորում և զարգացում, երաժշտական լսողության, ունակությունների բացահայտում և զարգացում, հոգևոր զարգացում, ազգային, հոգևոր և դասական նյութի յուրացում, երաժշտարվեստի զարգացում (երգչախումբ և հարվածային և շրխկան պարզագույն գործիքների նվագախումբ), գեղարվեստական մտածողության ձևավորում և զարգացում, ընդհանուր զարգացման ապահովում, ստեղծագործական երևակայության զարգացում:
ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 108 ժամ Տեսական պարապմունք՝ 35 ժամ Գործնական աշխատանք՝ 73 ժամ	
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար մուտքային մակարդակ չի պահանջվում:	
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է
1.իմանա հայ ազգային և հոգևոր երաժշտարվեստի նմուշները, որոնք ստեղծված են երեխաների համար կամ հասկանալի, հասանելի են նրանց: 2. գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները 3. իմանա երգի ուսուցման տարբեր մեթոդներ և հնարքներ,	1.իմանա հայ ազգային և հոգևոր երաժշտարվեստի նմուշները, որոնք ստեղծված են երեխաների համար կամ հասկանալի, հասանելի են նրանց, 1ա. կատարի հայ ազգային (խաղերգեր, հաշվերգեր, խաղիկներ, պարերգեր, այլ), հայ դասական կոմպոզիտորների ստեղծագործություններից ընտրված մանկական երգեր, 2.իմանա հայ, հոգևոր և համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները, 3. իմանա երգի ուսուցման տարբեր մեթոդներ և հնարքներ,

4. կարողանա կազմակերպել տարբեր երաժշտական խաղեր. 5. կարողանա մայրենի լեզվի, խոսքի մշակման ճանապարհով (ճիշտ խոսելաձև, տրամաբանական շեշտ, հնչյունների ճիշտ արտասանություն) խոսքը ասերգի վերածելով՝ նպաստել սովորողի մեղեդային մտածողության զարգացմանը:	4.կարողանա կազմակերպել տարբեր երաժշտական խաղեր, 4ա. կարողանա ստեղծել մանկական երաժշտական խաղեր՝ օգտագործելով ծրագրային նյութերը, ինտեգրելով մայրենի լեզվի դասընթացից համապատասխան նյութեր, ներգրավելով սովորողներին՝ զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը, 5.կարողանա մայրենի լեզվի, խոսքի մշակման ճանապարհով (ճիշտ խոսելաձև, տրամաբանական շեշտ, հնչյունների ճիշտ արտասանություն) խոսքը ասերգի վերածելով՝ նպաստել սովորողի մեղեդային մտածողության զարգացմանը, զանազանել խաղերգը, պարերգը, հաշվերգը, ասերգը, իմանա դրանց կատարման առանձնահատկությունները, կարողանա սովորողներին ճիշտ ներկայացնել դրանց կատարման ձևը՝ չսահմանափակելով նրանց ազատ ստեղծագործական մտածողությունը, 6.իմանա ծեսերը, ծիսական գործողությունները, ծիսական երգերը, պարերը, կարողանա լինել լիարժեք մասնակից, սովորողներին մասնակից դարձնել:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:	
ԱՐԴՅՈՒՆՔ 1. **Իմանալ հայ ազգային և հոգևոր երաժշտարվեստի նմուշները, որոնք ստեղծված են երեխաների** **համար կամ հասկանալի, հասանելի են նրանց:**	
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝ • գիտի երեխաների համար ստեղծված ազգային և կոմպոզիտորական բարձրարվեստ երաժշտական ստեղծագործությունները, որոնք նախատեսված են 2-10 տարեկանների համար, • գիտի ազգային և կոմպոզիտորական բարձրարվեստ երաժշտական ստեղծագոր-ծություններ, որոնք ստեղծված են կամ	**Թեմա 1** **Հայ ազգային, հոգևոր և կոմպոզիտորական երաժշտարվեստը՝ երեխաներին** • Ազգային, հոգևոր, կոմպոզիտորական երաժշտարվեստը՝ երեխաներին (6 ժամ) ✓ ազգային (խաղերգեր, հաշվերգեր, պարերգեր, խաղիկներ, այլ ազգային երգեր, պարեղանակներ) ✓ հոգևոր (պարզ հոգևոր երգեր՝ գրված կամ հասանելի երեխաների համար՝ Կոմիտաս, Ներսես Շնորհալի և այլն)

հասկանալի, հասնելի են 2-10 տարեկան երեխաների համար, • գիտի և կատարում է հայ ազգային և հոգևոր երաժշտարվեստի որոշակի քանակությամբ նմուշներ.	✓ կոմպոզիտորական (Կոմիտաս, Ա. Խաչատրյան, Մ. Եկմալյան, Վ. Ա. Մոցարտ, Յ. Ս. Բախ, Լ. Վ. Բեթհովեն, Ա. Վիվալդի, Պ. Ի. Չայկովսկի, Յ. Հայդն և այլն) • Հայ ազգային, հոգևոր և կոմպոզիտորական երաժշտարվեստի նմուշների ունկնդրում, վերլուծություն, ուսուցում, կատարում (6 ժամ) ✓ Հայ կոմպոզիտորները (Կոմիտաս, Ա. Խաչատրյան, Մ. Եկմալյան, Ա. Տիգրանյան և այլն) ✓ Դասական կոմպոզիտորները (Վ. Ա. Մոցարտ, Յ. Ս. Բախ, Լ. Վ. Բեթհովեն, Ա. Վիվալդի, Պ. Ի. Չայկովսկի, Յ. Հայդն և այլն) ✓ Ազգային (խաղերգեր, պարերգեր, հաշվերգեր, ազգային երգեր, պարեղանակներ)
բ. ճիշտ է ներկայացնում հայ ժողովրդական բանահյուսական նմուշների միջոցով (խաղիկներ, հաշվերգեր, խաղերգեր) երեխաների ռիթմի զարգացողությունը, երաժշտական ընկալունա-կությունը զարգացնող մեթոդներն և հնարքները:	**Թեմա 2** **Խաղերգեր, հաշվերգեր, խաղիկներ, ասերգեր, ազգային երգեր.** ✓ Երաժշտական ընկալունակության և ռիթմի զգացողության ձևավորումն ու զարգացումը՝ որպես նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական կրթության հիմք (4ժամ) ✓ Երեխաների տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ երաժշտական ստեղծագործությունների ընտրություն և ներկայացում (խաղիկներ, հաշվերգեր, խաղերգեր): (18 ժամ) ***Մանկական խաղերգեր*** «Արև, արև, դուս արի» «Քուրիկ Զիզի» «Արև, արև, արի դուս» «Դան, դան դանեդան» «Բոլոճկի երգ» «Զըմփիկ, զըմփիկ» «Պսակ-պսակ» ***Մանկական երգեր*** ***Հաշվերգեր, ճվիկներ*** «Այ իմ գնդակ» «Տիտոխիկ» «Ծափիկ, ծափիկ» «Ծիլ, ծիլ, ծիլծիլա» «Փայտե ձիուկ» «Ճվիկ, ճվիկ, ճկույթիկ» «Ջան, ջան, ջան աշուն է» «Էկե, դուկե» ***Պարերգեր*** ***Հոգևոր երգեր*** «Աղջկեք, պար բռնեցեք» Ն. Շնորհալի, «Առավոտ լուսո» «Բասեն բարի» Կոմիտաս, «Հայր մեր»

	«Կռունկ ջան» «Ավետիս (պարզ տարբերակ) «Հոպ, թռի» **Աշխատանքային, ծիսական երգեր** «Խնոցու երգ» «Ջաղացի երգ» «Վիճակի երգ» «Եկեք ծեծենք» «Գնացեք, տեսեք» «Կարկաչա» **Հայ և համաշխարհային դասական կոմպոզիտորների ընտրված մանկական երգերը**
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ Ուսանողին կտրվեն հարցեր երեխաների համար նախատեսված հայ ազգային և հոգևոր երաժշտա-րվեստի նմուշների մասին, կհանձնարարվի ցուցադրել մեթոդներ և հնարքներ, որոնք ուղղված են երեխաների ռիթմի զարգացողությունը և երաժշտական ընկալունակությունը բարձրացնելուն: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է ✓ երաժշտական ստեղծագործությունների հատվածների հիման վրա գուշակել այդ ստեղծագործության անվանումը և հեղինակին, ✓ երեխաների տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ կարողանում է ներկայացնել խաղիկներ, հաշվերգեր, խաղերգեր: Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է ✓ առաջարկված 5երաժշտական հատվածներից գուշակել 4-ը, ✓ ներկայացնում է հայ ժողովրդական բանահյուսության առնվազն 3 նմուշ, որոնք նպատակաուղղված են երեխաների ռիթմի զարգացածությունը և	

երաժշտական ընկալունակություն բարձրացնելուն:	
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում՝ համակարգիչ:	Ա. Շահնազարյան «Երգ ու բան» Ա. Շահնազարյան «Երգ ու հաց» Ա. Պետրոսյան «Ծուղրուղու» Ա. Շահնազարյան «Կաքավիկ» երգարան Կրթահամալիրի երաժշտության ծրագիրը http://www.youtube.com/watch?v=WMBy_htL7Gc http://www.youtube.com/watch?v=C4djvqWFRTw http://www.youtube.com/watch?v=vFTBaQve8Sc http://www.youtube.com/watch?v=5FdiL_YgPjA http://www.youtube.com/watch?v=g-RKLtHj0vA http://www.youtube.com/watch?v=BM0SFYk6s6U http://www.youtube.com/watch?v=v3lA_a-RPaE http://www.youtube.com/watch?v=CVnt857XOGQ http://www.youtube.com/watch?v=7syATZsdWYE
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ Տեսական պարապմունք՝ 7 ժամ Գործնական աշխատանք՝ 15 ժամ	
ԱՐԴՅՈՒՆՔ 2. **Գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները:**	
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝ ա. գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները և դրանց հեղինակներին, բ. գիտի դասական երաժշտության ունկնդրման կազմակերպման հնարքներ,	**Թեմա 3** **Համաշխարհային երաժշտարվեստը՝ երեխաներին** ✓ Եվրոպական կոմպոզիտորներ ✓ Ռուս կոմպոզիտորներ ✓ Հայ կոմպոզիտորներ • Դասական երաժշտության դերը երեխաների գեղագիտական, երաժշտական ճաշակի ձևավորման և հոգևոր զարգացման գործում. (8 ժամ) ✓ Վ. Ա. Մոցարտի, Յ. Ս. Բախի, Լ. Վ. Բեթհովենի, Ա. Վիվալդիի, Պ. Ի. Չայկովսկու, Յ. Հայդնի լավագույն ստեղծագործությունները, որոնք գրված կամ հասանելի են 2-10 տարեկան երեխաների համար ✓ Կոմիտասի, Ա. Խաչատրյանի և այլ հայ կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունները, որոնք գրված կամ հասանելի են 2-10 տարեկան երեխաների համար • Երաժշտական ունկնդրում. ստեղծագործությունների ընտրության և ունկնդրման կազմակերպման ձևերը և առանձնահատկությունները. (14 ժամ) ✓ Նախակրթարանում հնչում է

գ.կարողանում է կազմակերպել դասական երաժշտության ունկնդրում՝ ելնելով երեխաների տարիքային առանձնահատկություններից:	▪ քնի ժամին, ▪ օրվա ընթացքում երեխայի կատարած որևէ գործունեության ընթացքում (նախավարժանք, խաղ, երաժշտա-ռիթմիկ վարժություն և այլն) ▪ պարի կամ պարային շարժումներ կատարելու ընթացքում ▪ «բնական», շրխկան նվագախմբի համար նվագակցություն, ▪ փոքրիկ համերգների կազմակերպում կրտսեր, միջին, ավագ դպրոցի սովորողների միջոցով. ✓ Կրտսեր դպրոցում. ▪ տեսահոլովակ՝ ունկնդրվող երաժշտության ուղեկցությամբ ▪ թատերական, տիկնիկային բեմադրությունների երաժշտական ձևավորում ▪ «բնական», շրխկան նվագախմբի համար նվագակցություն, ▪ մնջախաղին ուղեկցող երաժշտություն:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ Ուսանողին կտրվեն հարցեր համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագոր-ծությունների մասին: Արդյունքի համարվում յուրացված, եթե ուսանողը կարողանում է երաժշտական ստեղծագործությունների հատվածների հիման վրա գուշակել այդ ստեղծագործության անվանումը և հեղինակին և երեխաների տարիքային առանձնահատ-կությունների հաշվառմամբ ընտրում է համապատասխան երաժշտական գործեր:	**Նախագծային աշխատանք.** Դասական մանկական երաժշտական ստեղծագործությունների ընտրանու ստեղծում (գրված կամ հասանելի 2-10 տարեկան երեխաների համար). Կոմիտաս Ա. Խաչատրյան Վ. Ա. Մոցարտ Յ. Ս. Բախ Պ. Ի. Չայկովսկի • Գործնական կիրառում ✓ Հարցաշար ✓ Ունկնդրման տեստ ✓ Ուսանողներին կառաջակվի տարբեր տարիքախմբերի համար կազմել երաժշտական ունկնդրման համար նախատեսված ստեղծագործությունների ընտրանի (էլեկտրոնային տարբերակ)՝ կազմակերպման մեթոդական ցուցումներով
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ	✓ Տեսական ուսուցում ✓ Գործնական ուսուցում ✓ Նախագծային աշխատանք

է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ:	✓ Գործնական կիրառում Անհրաժեշտ է ունենալ •Համակարգիչ, •Երգարաններ •Նոտաներ •Մասնագիտական գրականություն •Մեթոդական ձեռնարկ •Էլեկտրոնային գրականություն •Ձայնադարան (ձայնա-տեսասկավառակներ) •Էլեկտրոնային ձայնադարան •Ուսումնական նյութեր (դասագիրք, ձեռնարկ, էլեկտրոնային ռեսուրս և այլն) •Ֆոտո-տեսախցիկ •Անհատական համակարգիչ (նոթբուք/ նեթբուք)՝ անհրաժեշտ ծրագրերով
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ Տեսական պարապմունք՝ 8 ժամ Գործնական աշխատանք՝ 14 ժամ	
ԱՐԴՅՈՒՆՔ 3. **Իմանալ երգի ուսուցման տարբեր մեթոդներ և հնարքներ:**	
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝ ա. գիտի տարբեր թեմատիկ երգերի ուսուցման և կատարման առանձնահատկությունները, բ. կարողանում է երգ-երաժշտությունը համատեղել երեխաների գործունեության բոլոր ձևերի հետ, գ. ճիշտ է կազմակերպում երգի ուսուցումը՝ նպաստելով երեխաների ստեղծագործական ունակությունների, երևակայության, երաժշտական մտածողության զարգացմանը, դ. կարողանում է պարերգի ուսուցումը վերածել ներկայացման, ե. կարողանում է երաժշտությունը գույներով արտահայտել, զ. կարողանում է մեկնաբանել լսած երաժշտությունը, ներկայացնել իր զգացողությունները:	**Թեմա 4** **Երգի ուսուցման մեթոդներ և հնարքներ** ✓ Մանկական երգերի թեմատիկ խմբեր - խաղերգեր - հաշվերգեր - ճվիկներ - պարերգեր - մանկական երգեր - աշխատանքային - ծիսական ✓ Մանկական գործունեության ձևերի համատեղումը երաժշտության հետ ✓ Երգի ուսուցումը՝ որպես ստեղծագործական ունակությունների, երևակայության, երաժշտական մտածողության զարգացման միջոց

	✓ Երգի ուսուցման մեթոդներ և մեթոդական հնարքներ ✓ Պարերգը՝ որպես թատերական ներկայացման նյութ ✓ Երաժշտության գունային և խոսքային ընկալման առանձնահատկությունները ✓ Երգի ընկալման և մեկնաբանման առանձնահատկությունները
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ Ուսանողին կհանձնարարվի կազմակերպել երգի և պարերգի ուսուցման խաղ-ներկայացման նախագիծ, գույներով «երգը նկարել» և խոսքերով արտահայտել որևէ երաժշտության մասին իր զգացողությունները: Գույնով ներկայացնել տարբեր տեմբրեր: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է դասախոսի հանձնարարականի հիման վրա ինքնուրույն մշակել առնվազն ազգային 5 մանկական երգի ուսուցման խաղ-ներկայացման նախագիծ՝ դրանց կցելով այդ երգերի մասին գունային և խոսքային սեփական պատկերացումները:	
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բարձրարժեք մանկական երգերի ժողովածու, ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, գունավոր մատիտներ կամ ջրաներկ, նկարչական թղթեր, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ, բարձրախոս, ձայնի ուժեղացուցիչներ:	Ուղեցույց. Կրթահամալիրի երաժշտության ծրագիր, «Գործունեության ձևերը», Երգեցողություն
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ Տեսական պարապմունք՝ 8 ժամ Գործնական աշխատանք՝ 14 ժամ	
ԱՐԴՅՈՒՆՔ 4.	

Կազմակերպել տարբեր երաժշտական խաղեր, վարժանքներ:	
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝ ա. գիտի երաժշտական խաղերի առանձնահատկությունները և խնդիրները, բ. կարողանում է երաժշտական որոշակի խնդիրներով խաղեր կազմակերպել, գ. կարողանում է երաժշտական տարբեր վարժությունների միջոցով զարգացնել երեխաների ռիթմի զգացողությունը, դ. երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով կարողանում է ռիթմիկ ձայներ ստանալ:	**Թեմա 5** **Խաղը և երաժշտությունը** (14ժամ) ✓ Երաժշտական խաղերի առանձնահատկությունները և խնդիրները, ✓ Խաղերի կազմակերպումը՝ ըստ որոշակի երաժշտական խնդիրների ✓ Երեխաների ռիթմի զգացողությունը զարգացնող երաժշտական վարժություններ և խաղեր **Թեմա 6** **Բնության և շրջապատող աշխարհի ձայները** (10 ժամ) ✓ շրխկան, ✓ հարվածային ✓ «բնական նվագարաններ»
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ Ուսանողին կհանձնարարվի մշակել և կազմակերպել երաժշտական որոշակի խնդիրներով խաղեր, ստանալ ռիթմիկ ձայներ երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով, առարկաներով շրխկաններ պատրաստել: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ինքնուրույն հորինում է առնվազն 3 երգ-խաղ և ցուցադրել, ստանալ ռիթմիկ ձայներ երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով: Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է հաջողությամբ ցուցադրել իր կողմից հորինված երաժշտական խաղը և ստանում է ռիթմիկ ձայներ երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով:	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ Ուսանողին կհանձնարարվի ա. մշակել և կազմակերպել երաժշտական որոշակի խնդիրներով խաղեր, բ. ստանալ ռիթմիկ ձայներ երաժշտական, շրխկան, հարվածային նվագարաններով, գ. պատրաստել շրխկաններ և հարվածային նվագարաններ տարբեր գործիքներով, առարկաներով (կենցաղային): Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ա. ծրագրային երգով ինքնուրույն հորինում է առնվազն 3 երգ-խաղ և ցուցադրում, ստանում է ռիթմիկ ձայներ երաժշտական, ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով, իր ստեղծած հարվածային, շրխկան, ինչպես նաև «բնական նվագարաններով»: Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է - հաջողությամբ ցուցադրել իր կողմից հորինված երաժշտական խաղը և ստանում է ռիթմիկ ձայներ երաժշտական, ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով, իր ստեղծած

	հարվածային, շրխկան, ինչպես նաև «բնական նվագարաններով»:
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, երաժշտական որոշ գործիքներ (դհոլ, դափ, կիթառ, այլն), մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում՝ համակարգիչ, բարձրախոս, ձայնի ուժեղացուցիչներ	Ուղեցույց. Կրթահամալիրի երաժշտության ծրագիր, «Գործունեության ձևերը», Նվագակցություն «բնական», հարվածային և շրխկան նվագարաններով: Անհրաժեշտ է ունենալ •Համակարգիչ •Երգարաններ •Նոտաներ •Մասնագիտական ձեռնարկներ •Մասնագիտական գրականություն •Էլեկտրոնային գրականություն •Ձայնադարան (ձայնա-տեսասկավառակներ) •Էլեկտրոնային ձայնադարան •Ուսումնական նյութեր (դասագիրք, ձեռնարկ, •Էլեկտրոնային ռեսուրս և այլն) •Ֆոտո-տեսախցիկ •Անհատական համակարգիչ (նոթբուք/ նեթբուք)՝ անհրաժեշտ ծրագրերով •Ձայնագրիչ (թվային, հեռախոս)
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ Տեսական պարապմունք՝ 6 ժամ Գործնական աշխատանք՝ 18 ժամ	
ԱՐԴՅՈՒՆՔ 5. Իմանալ մայրենի լեզվի, խոսքի մշակման ճանապարհով (ճիշտ խոսելաձև, տրամաբանական շեշտ, հնչյունների ճիշտ արտասանություն) խոսքը ասերգի վերածելով նպաստել սովորողի մեղեդային մտածողության զարգացմանը:	
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝ ա. գիտի մեթոդներ և հնարքներ, որոնց կիրառմամբ խոսքը դառնում են ավելի երաժշտական, վերածվում ասերգի կամ երգի, բ. գիտի մայրենի լեզվի ճիշտ խոսելաձևն ու արտասանական առանձնահատկությունները, գ. երեխաների երաժշտական և խոսքային գործունեությունը կազմակերպելիս	**Թեմա 7** ✓ Մայրենի լեզվի ուղղախոսական – արտասանական առանձնահատկությունները և դրանց դրսևորումը երգարվեստում (4) ✓ Տաղաչափություն՝ հանգ, վանկ, ոտք, շեշտ, ռիթմ (2) ✓ Ասերգը՝ որպես խոսքային և երաժշտական ժանրերի համատեղում (2) ✓ Խոսքի երաժշտականացում. Խոսքը ասերգի վերափոխելու մեթոդներ և հնարքներ (6)

կարողանում է ճիշտ կիրառել արտասանական առանձնահատկությունը, դ. ճիշտ է կազմակերպում երգ-երաժշտության ունկնդրումը, նպաստելով երեխայի լսելու, տեսնելու, խորհելու ունակությունների զարգացմանը:	✓ Մեղեդային մտածողության զարգացումը երաժշտական ունկնդրման միջոցով (4)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ Ուսանողին կհանձնարարվի ընտրել առանձին ստեղծագործություններ, որոնք հնարավոր կլինի հետագայում վերածել ասերգերի և օգտագործել դրանք երեխաների երաժշտական և խոսքային գործունեության կազմակերպման ժամանակ՝ նպաստելով երեխայի լսելու տեսնելու, խորհելու ունակությունների զարգացմանը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է դասախոսի հանձնարարականի հիման վրա իր կողմից ընտրված ստեղծագործությունները վերածել ասերգերի և ներկայացնել դրանք կատարման չափանիշներին համաձայն: Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է հաջողությամբ կատարել իր կողմից հորինված առնվազն 2 ասերգ:	
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ, բարձրախոս,ձայնի ուժեղացուցիչներ, երաժշտական որոշ գործիքներ:	Անհրաժեշտ է ունենալ ·Համակարգիչ, ·Երգարաններ ·Նոտաներ ·Մասնագիտական ձեռնարկներ ·Մասնագիտական գրականություն ·Էլեկտրոնային գրականություն ·Ձայնադարան (ձայնա-տեսասկավառակներ) ·Էլեկտրոնային ձայնադարան ·Ուսումնական նյութեր (դասագիրք, ձեռնարկ, ·Էլեկտրոնային ռեսուրս և այլն) ·Ֆոտո-տեսախցիկ ·Անհատական համակարգիչ (նոթբուք/ նեթբուք)՝ անհրաժեշտ ծրագրերով ·Ձայնագրիչ (թվային, հեռախոս)
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ	

Տեսական պարապմունք՝ 6 ժամ Գործնական աշխատանք՝ 12 ժամ	